ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԼԻԱՆԱ ԲԱԼՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի դասախոս,
Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետի հայցորդ,
liana.balyan@ysu.am

DOI: 10.54503/978-9939-481-23-4-379

Համառոտագիր

Սոցիալական գործընկերությունը ժամանակակից հասարակություններում աշխատանքային հարաբերությունների կարգավորման, շահերի համաձայնեցման և սոցիալական կայունության ապահովման կարևորագույն ինստիտուցիոնալ մեխանիզմ է: Աշխատաշուկայի կառուցվածքային փոփոխությունները և սոցիալ-տնտեսական անհավասարությունների խորացումը պայմանավորում են սոցիալական գործընկերության արդյունավետության համակարգային գնահատման անհրաժեշտությունը: Սույն հոդվածի նպատակն է իրականացնել սոցիալական գործընկերության արդյունավետության գնահատման միջազգային մեթոդաբանական գործիքների համեմատական վերլուծություն՝ բացահայտելով դրանց կառուցվածքային առանձնահատկությունները, կիրառական հնարավորությունները և սահմանափակումները, ինչպես նաև գնահատելով դրանց կիրառելիությունը Հայաստանի համատեքստում:

Հետազոտությունն իրականացվել է որակական սոցիոլոգիական մեթոդաբանության շրջանակում՝ կիրառելով տեսական, բովանդակային և համեմատական-ինստիտուցիոնալ վերլուծության մեթոդներ: Էմպիրիկ հիմքը կազմել են Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) և Եվրոպական հանձնաժողովի կողմից մշակված սոցիալական գործընկերության գնահատման մեթոդաբանական մոտեցումները: Վերլուծությունը ցույց է տալիս, որ միջազգային գործիքները հիմնվում են բազմաչափ մոտեցումների վրա՝ համադրելով ինստիտուցիոնալ, գործընթացային և ազդեցության ցուցանիշներ:

Միևնույն ժամանակ պարզվում է, որ առկա մեթոդաբանությունները չեն ապահովում արդյունավետության ամբողջական և համադրելի գնահատման միասնական շրջանակ, հատկապես զարգացող և անցումային տնտեսությունների պայմաններում: Հայաստանի համատեքստի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սոցիալական գործընկերության արդյունավետության համակարգված գնահատման գործիքներ ներկայումս չեն կիրառվում, ինչը սահմանափակում է սոցիալական երկխոսության ազդեցության համապարփակ վերլուծությունը:

Հոդվածում հիմնավորվում է սոցիալական գործընկերության արդյունավետության գնահատման համակցված և տեղայնացված

մեթոդաբանական մոդելի մշակման անհրաժեշտությունը, որը կներառի ինչպես քանակական, այնպես էլ որակական ցուցանիշներ: Նման մոտեցումը կարող է նպաստել սոցիալական երկխոսության ինստիտուցիոնալ զարգացմանը, աշխատանքային հարաբերությունների կառավարման արդյունավետության բարձրացմանը և սոցիալական քաղաքականությունների տվյալահեն ձևավորմանը:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ սոցիալական գործընկերություն, սոցիալական երկխոսություն, արդյունավետության գնահատում, ինստիտուցիոնալ վերլուծություն, կոլեկտիվ բանակցություններ, միջազգային մեթոդաբանություններ, սոցիալական քաղաքականություն:

COMPARATIVE ANALYSIS OF INTERNATIONAL TOOLS FOR EVALUATING THE EFFECTIVENESS OF SOCIAL PARTNERSHIP

LIANA BALYAN

Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Lecturer
Yerevan State University, Faculty of Sociology, PhD student
liana.balyan@ysu.am

Abstract

Social partnership in contemporary societies serves as a key institutional mechanism for regulating labour relations, reconciling interests, and ensuring social stability. Structural changes in labour markets and the deepening of socio-economic inequalities necessitate a systematic assessment of the effectiveness of social partnership. This article aims to conduct a comparative analysis of international methodological tools for evaluating the effectiveness of social partnership, identifying their structural characteristics, practical applications, and limitations, and assessing their applicability in the Armenian context.

The study is conducted within a qualitative sociological framework, employing theoretical analysis, content analysis, and comparative institutional analysis. The empirical basis consists of methodological approaches to assessing social partnership developed by the International Labour Organisation (ILO), the Organisation for Economic Co-operation and Development (OECD), and the European Commission. The analysis demonstrates that international tools rely on multidimensional approaches that combine institutional, process-related, and outcome-based indicators.

At the same time, the findings reveal that existing methodologies do not provide a comprehensive and comparable framework for assessing effectiveness, particularly in the context of developing and transition economies. The analysis of the Armenian context indicates that systematic tools for evaluating the effectiveness of social partnership are not currently applied, limiting the possibilities for a comprehensive assessment of the impact of social dialogue.

The article substantiates the need to develop an integrated and localised

methodological model for assessing the effectiveness of social partnership that incorporates both quantitative and qualitative indicators. Such an approach may contribute to the institutional development of social dialogue, enhance the effectiveness of labour relations governance, and support the formulation of evidence-based social policies.

Keywords and phrases: Social partnership, social dialogue, effectiveness evaluation, institutional analysis, collective bargaining, international methodologies, social policy.

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ МЕЖДУНАРОДНЫХ ИНСТРУМЕНТОВ ОЦЕНКИ ЭФФЕКТИВНОСТИ СОЦИАЛЬНОГО ПАРТНЁРСТВА

ЛИАНА БАЛЯН

Преподаватель Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, соискатель факультета социологии Ереванского государственного университета

liana.balyan@ysu.am

Аннотация

Социальное партнёрство в современных обществах выступает важнейшим институциональным механизмом регулирования трудовых отношений, согласования интересов и обеспечения социальной стабильности. Структурные изменения на рынке труда и углубление социально-экономических неравенств обусловливают необходимость системной оценки эффективности социального партнёрства. Целью данной статьи является проведение сравнительного анализа международных методологических инструментов оценки эффективности социального партнёрства с выявлением их структурных особенностей, прикладных возможностей и ограничений, а также оценка их применимости в контексте Армении.

Исследование выполнено в рамках качественной социологической методологии с применением теоретического, контент-анализа и сравнительно-институционального анализа. Эмпирическую основу составили методологические подходы к оценке социального партнёрства, разработанные Международной организацией труда (МОТ), Организацией экономического сотрудничества и развития (ОЭСР) и Европейской комиссией. Анализ показывает, что международные инструменты базируются на многомерных подходах, сочетающих институциональные, процессуальные и результативные показатели.

В то же время выявлено, что существующие методологии не обеспечивают целостной и сопоставимой рамки оценки эффективности, особенно в условиях развивающихся и переходных экономик. Исследование армянского контекста показывает, что системные инструменты оценки эффективности социального партнёрства в настоящее время не применяются, что ограничивает возможности комплексного анализа влияния социального диалога.

В статье обосновывается необходимость разработки интегрированной и локализованной методологической модели оценки эффективности социального

партнёрства, включающей как количественные, так и качественные показатели. Такой подход может способствовать институциональному развитию социального диалога, повышению эффективности управления трудовыми отношениями и формированию основанной на данных социальной политики.

Ключевые слова и фразы: социальное партнёрство, социальный диалог, оценка эффективности, институциональный анализ, коллективные переговоры, международные методологии, социальная политика.

Ներածություն

Ժամանակակից հասարակություններում աշխատանքային հարաբերությունների կարգավորման կարևորագույն մեխանիզմներից է սոցիալական գործընկերությունը, որը հիմնված է պետության, գործատուների և աշխատողների միությունների կամ ներկայացուցիչների միջև համագործակցության վրա: Գործընկերության նպատակն է հավասարակշռել և կարգավորել աշխատանքային հարաբերությունները, նպաստել աշխատողների սոցիալ-աշխատանքային իրավունքների պաշտպանությանը և արժանապատիվ աշխատանքի պայմանների ձևավորմանը: Հայաստանում սոցիալական գործընկերության իրավական հիմքերն ամրագրված են «ՀՀ Աշխատանքային օրենսգրքում», որտեղ սահմանվում են դրա հիմնական սկզբունքները, կողմերը և իրականացման ձևերը: Համաձայն «Աշխատանքային օրենսգրքի»՝ սոցիալական գործընկերությունը հիմնվում է կողմերի իրավահավասարության, փոխադարձ հարգանքի, համագործակցության, շահերի համաձայնեցման և ստանձնած պարտավորությունների պարտադիր կատարման սկզբունքների վրա **[1, էջ 43]**: Այն իրականացվում է սոցիալական երկխոսության տարբեր մեխանիզմների միջոցով, որոնց թվում են կոլեկտիվ բանակցությունները, կոլեկտիվ պայմանագրերի կնքումը, ինչպես նաև սոցիալ-աշխատանքային հարաբերությունների կարգավորմանն ուղղված եռակողմ համագործակցության ձևաչափերը: Այս ամենի վերջնանպատակն է կողմերի շահերի հավասարակշռումը, արդյունավետ աշխատանքային փոխհարաբերությունների ձևավորումը, աշխատաշուկայի կարգավորումը, հասարակությունում սոցիալական կայունության ապահովումը:

Սոցիալական գործընկերության արդյունավետությունը մեծապես պայմանավորում է սոցիալ-տնտեսական քաղաքականությունների իրականացման հաջողությունը: Աշխատաշուկայի փոփոխվող պայմանները, գլոբալ տնտեսական գործընթացները և սոցիալական անհավասարությունների խորացումը առաջ են բերում սոցիալական երկխոսության մեխանիզմների արդյունավետության համակարգային գնահատման անհրաժեշտություն: Ուստի սոցիալական գործընկերության արդյունավետության չափման և գնահատման հարցը դառնում է առաջնահերթ ոչ միայն գիտական, այլ նաև գործնական-կիրառական տեսանկյունից, ընդ որում՝ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով: Այդ նպատակով միջազգային կազմակերպությունները և հետազոտական կենտրոնները մշակում և կիրառում են տարբեր մեթոդաբանական գործիքներ, որոնք ուղղված են սոցիալական գործընկերության ինստիտուցիոնալ զարգացման, մասնակցայնության մակարդակի և սոցիալ-տնտեսական արդյունքների գնահատմանը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սոցիալական գործընկերության արդյունավետության գնահատման համար կիրառվում են տարբեր մոդելներ և ցուցանիշների համակարգեր: Այդ մոդելները ներառում են ինչպես քանակական, այնպես էլ որակական չափումներ: Այդ գործիքները հնարավորություն են տալիս գնահատելու սոցիալական երկխոսության ինստիտուտների գործունեությունը, կոլեկտիվ բանակցությունների տարածվածությունը, սոցիալական գործընկերների ներգրավվածության մակարդակը և համագործակցության ազդեցությունը սոցիալ–տնտեսական գործընթացների վրա: Միջազգային կառույցների կողմից մշակած սոցիալական գործընկերության ու երկխոսության գնահատման տարբեր մեթոդաբանությունները գտել են իրենց տեղայնացված կիրառությունը, սակայն դրանց համակարգված համեմատական ուսումնասիրությունն ու մեթոդաբանական բովանդակության վերլուծությունը ցայսօր մնում են ոչ բավարար: Այսպիսով՝ կարևոր նշանակություն է ստանում միջազգային փորձի համեմատական ուսումնասիրությունը, որը հնարավորություն կտա բացահայտելու սոցիալական գործընկերության գնահատման առավել արդյունավետ գործիքները և կիրառելու դրանք կոնկրետ ազգային համատեքստերում:

Սույն հոդվածի նպատակն է իրականացնել սոցիալական գործընկերության արդյունավետության գնահատման միջազգային գործիքների համեմատական վերլուծություն և բացահայտել դրանց հիմնական առանձնահատկությունները, ուժեղ և թույլ կողմերը, կիրառական հնարավորությունները և սահմանափակումները: Հոդվածում ներկայացված են սոցիալական գործընկերության գնահատման տեսական հիմքերը, Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) և Եվրոպական հանձնաժողովի մեթոդաբանությունների բովանդակությունները, դրանց ցուցանշային համակարգերի համեմատական վերլուծությունը: Հետազոտության արդյունքները կարող են նպաստել սոցիալական գործընկերության արդյունավետության գնահատման մեթոդաբանական հիմքերի կատարելագործմանը և ազգային մակարդակում համապատասխան գործիքների մշակմանը:

Տեսամեթոդաբանական հիմքեր

«Արդյունավետություն» հասկացության սոցիոլոգիական մեկնաբանություն

«Արդյունավետություն» հասկացությունն ունի բազմաբովանդակ մեկնաբանություններ, որոնք պայմանավորված են ինչպես տեսական մոտեցումներով, այնպես էլ կիրառական համատեքստով: Ընդհանուր առմամբ՝ այն կարելի է սահմանել որպես ռեսուրսների այնպիսի կազմակերպում, որը հնարավոր է դարձնում *նվազագույն ծախսերով հասնել առավելագույն արդյունքի*: Արդյունավետության չափման այս պարզ բանաձևը, սակայն, բարդանում է, երբ այն կիրառում ենք սոցիալական համակարգերի առնչությամբ: Բարդ սոցիալական համակարգերը բնութագրվում են դերակատարների բազմազան ու հաճախ հակասական շահերով, փոխազդեցության բազմամակարդակ կառուցվածքով, ինչպես նաև արդյունքների ոչ միայն նյութական, այլև սոցիալական ու սիմվոլիկ բնույթով: Սոցիոլոգիական տեսանկյունից՝ արդյունավետությունը դիտարկվում է ոչ միայն որպես նպատակների

իրականացման աստիճան, այլ նաև որպես սոցիալական ինստիտուտների կայունության, մասնակիցների ներգրավվածության և փոխադարձ վստահության ցուցիչ՝ ինչպես միկրո–, այնպես էլ մակրոմակարդակներում:

Սոցիալական գործընկերության վերլուծության կարևոր տեսական հիմքերից մեկը՝ **կառուցվածքային ֆունկցիոնալիզմի մոտեցումը,** հասարակությունը դիտարկում է որպես փոխկապակցված ինստիտուտների ամբողջական համակարգ: Համաձայն կառուցվածքային ֆունկցիոնալիզմի ներկայացուցիչ Թալկոտ Պարսոնսի՝ հասարակության կայուն գործունեությունը պայմանավորված է չորս հիմնական գործառույթների ապահովմամբ: Դրանք են՝ ադապտացիա, նպատակների իրականացում, ինտեգրում և արժեքային համակարգի պահպանում (AGIL մոդել) **[7, էջ 54]:** Արդյունավետ ինստիտուտը, ըստ այս մոտեցման, ապահովում է հասարակության համակարգային հավասարակշռությունն ու սոցիալական կոնֆլիկտների կարգավորումը: Սոցիալական գործընկերությունն այս կոնտեքստում ստանձնում է հասարակական ինտեգրման, կայունության ամրագրման և կոնֆլիկտային ռիսկի նվազեցման գործառույթներ:

Կոնֆլիկտաբանական մոտեցման շրջանակներում հասարակական հարաբերությունները դիտարկվում են որպես կապիտալի ու աշխատողների ներկայացուցիչների միջև հակասական շահերի մշտական դաշտ: Ըստ Կարլ Մարքսի՝ արտադրական հարաբերություններում գոյություն ունեցող անհամաձայնությունները ծնվում են կապիտալի տիրապետման և դրանից զրկված լինելու հանգամանքներով և կառուցվածքային երևույթ են **[5, էջ 36]**: Սոցիալական գործընկերության ինստիտուտները, ըստ այս տեսանկյան, կատարում են կոնֆլիկտների «քաղաքակրթման» գործառույթ. ոչ թե վերացնում, այլ ինստիտուցիոնալ բանակցային ձևաչափ ստեղծելով՝ կառավարելի են դարձնում հակամարտությունները:

Արդյունաբերական հարաբերությունների տեսության ներկայացուցիչ Ջոն Դանլոպի արդյունաբերական հարաբերությունների համակարգային մոդելն ամենաուղղակի կերպով վերաբերում է սոցիալական գործընկերությանը, ըստ որի՝ աշխատաշուկայի կարգավորումն իրականացվում է երեք հիմնական դերակատարների՝ պետության, գործատու կազմակերպությունների և արհեստակցական միությունների փոխգործակցության միջոցով **[2, էջ 72]**:

Ժամանակակից **ինստիտուցիոնալ տեսություններն** ուսումնասիրում են սոցիալական ինստիտուտների դերն ու գործառույթները հասարակական հարաբերությունների կարգավորման գործընթացում: Ինստիտուցիոնալ մոտեցման շրջանակում սոցիալական գործընկերությունը դիտարկվում է որպես ձևավորված կանոնների, նորմերի, ընթացակարգերի և կազմակերպական մեխանիզմների համակարգ, որը կարգավորում է դերակատարների փոխհարաբերությունները աշխատաշուկայում **[9, էջ 81]:** Դրան զուգահեռ, Մաքս Վեբեր բյուրոկրատական կազմակերպությունների տեսության շրջանակներում, կարևոր դեր է հատկացվում իրավական ռացիոնալությանը, կանոնակարգերի հստակությանն ու ղեկավարման մեխանիզմների ու անդամների ներգրավվածության հավասարակշռությանը **[9, էջ 84]**:

Ժամանակակից սոցիոլոգիական մոտեցումներում սոցիալական գործընկերության արդյունավետության գնահատումը հիմնվում է **բազմաչափ մոդելների** վրա, որոնցում կարևոր է ռեսուրսների ներդրման, գործընթացի կազմակերպման, արդյունքների ու վերջնարդյունքների

փոխկապակցվածությունը: Այսպիսով՝ կարելի է առանձնացնել արդյունավետության գնահատման երեք փոխկապակցված հարթություններ՝

- ինստիտուցիոնալ հիմք, որը ենթադրում է գործընկերությունը կարգավորող իրավական ու կազմակերպական մեխանիզմների առկայություն,
- մասնակցություն՝ կողմերի ներգրավվածության մակարդակ երկխոսության գործընթացներում,
- արդյունքներ՝ համագործակցության սոցիալ-տնտեսական ազդեցությունը և ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացումը:

Վերոնշյալ տեսական մոտեցումների համադրությունը հնարավորություն է տալիս սոցիալական գործընկերությունը վերլուծել ոչ միայն որպես ֆորմալ ինստիտուտ, այլև որպես շահերի ինտերակտիվ համաձայնեցման գործընթաց, իսկ բազմաչափ շրջանակը հիմք է՝ հանդիսանում սոցիալական գործընկերության արդյունավետության գնահատման միջազգային մեթոդաբանությունների վերլուծության և արդյունավետության գնահատման մեթոդաբանական ռազմավարությունների ձևակերպման համար, քանի որ թույլ է տալիս համակողմանիորեն բացահայտել յուրաքանչյուր մոտեցման առավելություններն ու սահմանափակությունները:

Սոցիալական գործընկերության արդյունավետության վերլուծության մեջ կարևոր դեր ունեն նաև **սոցիալական փոխանակման** և **սոցիալական կապիտալի տեսությունները**: Սոցիալական փոխանակման տեսության շրջանակում գործընկերությունը դիտարկվում է որպես ռեսուրսների փոխանակման գործընթաց, որտեղ համագործակցության արդյունավետությունը կախված է կողմերի միջև փոխադարձ օգուտների հարաբերակցությունից: Սոցիալական կապիտալի տեսության շրջանակում արդյունավետ համագործակցության կարևոր նախապայման է վստահության, նորմերի և սոցիալական կապերի առկայությունը: Այս ուղղության կարևոր ներկայացուցիչներից մեկը՝ Ռոբերտ Պուտնամը, ընդգծում է, որ սոցիալական կապիտալը ձևավորվում է փոխադարձ վստահության, համագործակցության նորմերի և սոցիալական ցանցերի միջոցով, որոնք նպաստում են հասարակության ներսում արդյունավետ համագործակցությանը **[8, էջ 169]:** Այս տեսությունները կարևոր ձևաբանական հեռանկար են ապահովում. արդյունավետ գործընկերությունն ավելի հավանական է այն ինստիտուցիոնալ համատեքստերում, որտեղ կողմերը տիրապետում են բարձր սոցիալական կապիտալի:

Վերջին տասնամյակներում սոցիալական գործընկերության արդյունավետության գնահատման համար մշակվել են նաև տարբեր չափման մոտեցումներ, որոնք նպատակ ունեն համակարգված ձևով գնահատել գործընկերային հարաբերությունների ազդեցությունը սոցիալական և տնտեսական գործընթացների վրա: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ սոցիալական գործընկերության գնահատման մոդելները հիմնականում ներառում են սոցիալական ազդեցության, համագործակցության կայունության, նորարարական լուծումների և տնտեսական արդյունավետության չափումներ: Նման մոդելներում գնահատումը հաճախ իրականացվում է բազմաչափ ցուցանիշների համակարգի միջոցով: Տվյալ դեպքում համադրվում են ինչպես քանակական, այնպես էլ որակական տվյալները:

Այսպիսով՝ սոցիալական գործընկերության արդյունավետության ուսումնասիրությունը պահանջում է տարբեր տեսական մոտեցումների համադրում: Սոցիոլոգիական տեսությունները հնարավորություն են տալիս հասկանալու համագործակցության սոցիալական հիմքերը, իսկ ժամանակակից գնահատման մոդելները թույլ են տալիս մշակել գործնական մեխանիզմներ՝ գործընկերության արդյունավետությունը չափելու համար: Այդ պատճառով սոցիալական գործընկերության գնահատման ժամանակ նպատակահարմար է կիրառել բազմաչափ մեթոդաբանական մոտեցում, որը միավորում է ինստիտուցիոնալ, գործընթացային և արդյունքային չափումները:

Ուսումնասիրության մեթոդներ

Հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրել սոցիալական գործընկերության արդյունավետության գնահատման միջազգային մեթոդաբանական գործիքները և բացահայտել դրանց կիրառական հնարավորությունները Հայաստանի համատեքստում:

Հետազոտությունն իրականացվել է սոցիոլոգիական որակական մեթոդաբանությամբ: Կատարվել է՝

- տեսական վերլուծություն,
- բովանդակային /կոնտենտ վերլուծություն,
- համեմատական-ինստիտուցիոնալ վերլուծություն:

Հետազոտության շրջանակում իրականացվել է սոցիալական գործընկերության գնահատման միջազգային փորձի համակարգված ուսումնասիրություն, որի հիման վրա ընտրվել են երեք առավել կիրառվող գնահատման գործիքներ, որոնք օգտագործվում են սոցիալական երկխոսության և աշխատանքային հարաբերությունների ուսումնասիրություններում՝ միջազգային մակարդակում: Ուսումնասիրության էմպիրիկ հիմքը կազմել են ԱՄԿ-ի, ՏՀԶԿ-ի և Եվրոպական հանձնաժողովի մշակած մեթոդաբանական փաստաթղթերն ու վիճակագրական տվյալները, որոնք վերաբերում են սոցիալական երկխոսության ու աշխատաշուկայի կառավարման գնահատմանը: Ընտրված գործիքները վերլուծվել են դրանց կառուցվածքային բաղադրիչների, կիրառվող ցուցանիշների և գնահատման մեխանիզմների տեսանկյունից:

Միևնույն ժամանակ հետազոտությունը ներառում է նաև Հայաստանի ինստիտուցիոնալ միջավայրի սահմանափակ կիրառական վերլուծություն՝ նպատակ ունենալով գնահատել սոցիալական գործընկերության արդյունավետության գնահատման մեխանիզմների առկայությունը ազգային մակարդակում: Այս մոտեցումը հնարավորություն է տվել համադրել միջազգային փորձը և տեղական ինստիտուցիոնալ իրականությունը:

Հետազոտության շրջանակում օգտագործվել են ինչպես գիտական, այնպես էլ ինստիտուցիոնալ տվյալների աղբյուրներ: Հայաստանի համատեքստի վերլուծության համար օգտագործվել են նաև պաշտոնական փաստաթղթեր, քաղաքականության ռազմավարություններ և սոցիալական գործընկերության ինստիտուցիոնալ զարգացման վերաբերյալ առկա ուսումնասիրություններ: Վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայումս Հայաստանում սոցիալական գործընկերության արդյունավետության գնահատման համակարգված մեթոդաբանություն կամ ինդեքսային գնահատման գործիք չի կիրառվում: Չնայած միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվել են

սոցիալական երկխոսության զարգացմանն ուղղված նախաձեռնություններ, դրանց շրջանակում առաջարկված գնահատման մեխանիզմները դեռևս չեն կիրառվում ամբողջական և համակարգային ձևով:

Տվյալների վերլուծության համար կիրառվել է համեմատական վերլուծության մեթոդը, որի միջոցով ուսումնասիրվել են սոցիալական գործընկերության գնահատման ընտրված միջազգային գործիքների կառուցվածքային առանձնահատկությունները: Համեմատական վերլուծությունը իրականացվել է մի քանի հիմնական չափանիշների հիման վրա՝

- *գնահատման ինստիտուցիոնալ մակարդակ.* ուսումնասիրվել է, թե սոցիալական գործընկերության գնահատումը որ մակարդակում է իրականացվում՝ ազգային, ոլորտային կամ կազմակերպական (ձեռնարկության) մակարդակում,
- *կիրառվող ցուցանիշների համակարգ.* վերլուծվել է, թե արդյոք գնահատման գործընթացում օգտագործվում են քանակական ցուցանիշներ (օրինակ՝ արհմիությունների անդամների թիվ, կոլեկտիվ պայմանագրերի քանակ) կամ որակական գնահատման մեխանիզմներ (օրինակ՝ սոցիալական երկխոսության արդյունավետության փորձագիտական գնահատումներ),
- *օգտագործվող հետազոտական մեթոդներ.* ուսումնասիրվել են գնահատման գործընթացում կիրառվող հետազոտական մեթոդները, այդ թվում՝ վիճակագրական տվյալների վերլուծությունը, հարցումները, փորձագիտական գնահատումները և ինստիտուցիոնալ ինքնագնահատման մեխանիզմները,
- *տվյալների աղբյուրներ և հավաքման մեթոդներ.* վերլուծվել է, թե գնահատման գործընթացում ինչպիսի տվյալների աղբյուրներ են օգտագործվում (պաշտոնական վիճակագրություն, վարչական տվյալներ, հարցումներ կամ փորձագիտական գնահատումներ),
- *գնահատման հիմնական նպատակները.* ուսումնասիրվել է, թե տվյալ գնահատման գործիքը ինչ նպատակ է հետապնդում՝ սոցիալական երկխոսության ինստիտուցիոնալ զարգացման գնահատում, աշխատաշուկայի հարաբերությունների վերլուծություն կամ սոցիալական քաղաքականության արդյունավետության գնահատում:

Հիմնվելով «արդյունավետության» տեսական մոտեցումների վրա՝ համեմատական վերլուծությունն իրականացվել է նաև հետևյալ ուղղություններով՝

- ինստիտուցիոնալություն,
- մասնակցայնություն,
- արդյունքներ:

Այս վերլուծական շրջանակը հնարավորություն է տվել բացահայտելու սոցիալական գործընկերության գնահատման տարբեր մեթոդների ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև գնահատելու դրանց կիրառման հնարավորությունները Հայաստանում սոցիալական գործընկերության ուսումնասիրության մեջ: Միևնույն ժամանակ նման մոտեցումը հիմք է ստեղծում սոցիալական գործընկերության արդյունավետության գնահատման բազմաչափ մեթոդաբանական մոդելի մշակման համար, որը կարող է կիրառվել ազգային մակարդակում:

Ստացված արդյունքներ

Սոցիալական գործընկերության արդյունավետության գնահատման միջազգային գործիքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբեր կազմակերպությունների կողմից մշակված մեթոդաբանությունները տարբերվում են ինչպես իրենց կառուցվածքով, այնպես էլ կիրառման նպատակներով: Ստորև ներկայացնենք դրանք իրենց հիմնական գծերով՝

ԱՄԿ-ի սոցիալական երկխոսության ինստիտուտների ինքնագնահատման հարցաշար կամ ցուցանիշային շրջանակ. Աշխատանքի միջազգային կազմակերպությունն առաջարկում է սոցիալական գործընկերության գնահատման ամենաամբողջական ցուցանիշային շրջանակներից մեկը, որը ներառում է մի քանի հիմնական ուղղություններ **[4, էջ 14–17]**, այսպես՝

- արհեստակցական ու գործատուների կազմակերպությունների անդամակցության ու ծածկույթի ցուցանիշներ,
- կոլեկտիվ բանակցությունների ծածկույթ՝ ըստ ոլորտների ու մակարդակների,
- եռակողմ խորհրդատվական մարմինների ինստիտուցիոնալ գոյություն ու արդյունավետություն,
- սոցիալական երկխոսության իրավական ու կանոնակարգային շրջանակ:

ԱՄԿ-ի շրջանակի *ուժեղ կողմն* է նրա ինստիտուցիոնալ ճկունությունը. ցուցանիշները կատարելու ճանապարհը հարմարեցված է ինչպես բարձր, այնպես էլ ցածր եկամուտ ունեցող երկրներին: *Թույլ կողմն* այն է, որ ֆունկցիոնալ արդյունքների (բանակցությունների իրական ազդեցության) չափումն ավելի թույլ է, քան ինստիտուցիոնալ ցուցանիշներինը:

ՏՀԶԿ-ի մոտեցումը. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) կիրառում է ավելի տնտեսագիտական ու քանակականացված մոտեցում, որը հիմնվում է աշխատաշուկայի վիճակագրության վրա **[6, էջ 112]**: Այսպես՝

- կոլեկտիվ բանակցությունների կենտրոնացման ու համակարգման ցուցանիշ,
- արհեստակցական կազմակերպությունների անդամության դինամիկա,
- կոլեկտիվ պայմանագրերի ծածկույթ,
- գործադուլային ակտիվության ցուցանիշ,
- նվազագույն աշխատավարձի և իրական աշխատավարձի դինամիկա:

ՏՀԶԿ-ի *ուժեղ կողմն* է տնտեսական ցուցանիշների հետ կապը, ինչը թույլ է տալիս չափել սոցիալական գործընկերության ազդեցությունն ու գնի/արդյունքի հարաբերակցությունը: *Թույլ կողմն* այն է, որ մոտեցումը կենտրոնանում է ՏՀԶԿ-ի անդամ, հիմնականում՝ բարձր եկամուտ ունեցող երկրների վրա, ինչը սահմանափակում է դրա կիրառելիությունը զարգացող երկրներում:

Եվրոպական հանձնաժողովի արդյունաբերական հարաբերությունների զեկույց. Եվրոպական հանձնաժողովն իր Արդյունաբերական հարաբերությունների զեկույցի շրջանակում կիրառում է համակցված մոտեցում, որն ընդգրկում է ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ գործընթացային ու ազդեցության հարթությունները **[3, էջ 87]**: Այսպես՝

- ազգային սոցիալ-տնտեսական խորհուրդների հզորություն ու ազդեցություն,
- ոլորտային և ձեռնարկությունների մակարդակի բանակցային գործընթացների արդյունավետություն,
- աշխատողների ներգրավվածությունն ու ձայնի ուժն ընկերությունների կառավարման մեջ,
- աշխատանքային հարաբերությունների և կառավարման ժողովրդավարացման ցուցանիշ:

Հանձնաժողովի զեկույցի *ուժեղ կողմն* է ԵՄ անդամ պետությունների կուտակված քաղաքականության ու փորձի բազայի ինտեգրումը: *Թույլ կողմը* ԵՄ-ի թվային ու ինստիտուցիոնալ համատեքստի հատուկ բնութագրերի վրա կենտրոնացումն է, ինչը սահմանափակում է ոչ ԵՄ երկրների համար կիրառելիությունը:

Հետազոտության շրջանակում իրականացված համեմատական վերլուծությունը հիմնվել է մի շարք մեթոդաբանական չափանիշների վրա, որոնք հնարավորություն են տվել գնահատելու ընտրված գործիքների կառուցվածքային առանձնահատկությունները և կիրառական հնարավորությունները սոցիալական գործընկերության ուսումնասիրության գործընթացում:

Առաջին կարևոր չափանիշը վերաբերում է գնահատման ինստիտուցիոնալ մակարդակին: Վերլուծությունը ցույց է տալիս, որ սոցիալական գործընկերության գնահատման միջազգային գործիքները հիմնականում կենտրոնանում են ազգային մակարդակի ինստիտուցիոնալ համակարգերի վրա: Օրինակ՝ սոցիալական երկխոսության ինստիտուտների ինքնագնահատման մեթոդը՝ մշակված ԱՄԿ-ի կողմից, նախատեսված է գնահատելու սոցիալական երկխոսության ինստիտուտների գործունեությունը ազգային մակարդակում: Միևնույն ժամանակ որոշ մեթոդաբանական գործիքներ ներառում են նաև ոլորտային կամ կազմակերպական մակարդակի գնահատման տարրեր՝ կապված կոլեկտիվ բանակցությունների և աշխատանքային հարաբերությունների կառավարման հետ:

Երկրորդ կարևոր չափանիշը, որը դիտարկվել է վերլուծության ժամանակ, վերաբերում է կիրառվող ցուցանիշների համակարգին: Վերլուծությունը ցույց է տալիս, որ սոցիալական գործընկերության գնահատման մեթոդաբանությունները սովորաբար համադրում են ինչպես քանակական, այնպես էլ որակական ցուցանիշներ: Քանակական ցուցանիշները հիմնականում վերաբերում են աշխատաշուկայի կառուցվածքային բնութագրերին, օրինակ՝ կոլեկտիվ պայմանագրերի ընդգրկման մակարդակին, արհմիությունների ներկայացվածությանը և սոցիալական երկխոսության ինստիտուցիոնալ կառույցների տարածվածությանը: Միևնույն ժամանակ կիրառվում են նաև որակական գնահատման մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս ուսումնասիրել գործընկերների համագործակցության արդյունավետությունը, նրանց ներգրավվածության մակարդակը և սոցիալական երկխոսության գործընթացի կայունությունը:

Դիտարկված երրորդ չափանիշը վերաբերում է օգտագործվող հետազոտական մեթոդներին: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սոցիալական գործընկերության գնահատման գործընթացում կիրառվում են տարբեր հետազոտական մեթոդներ՝ ներառյալ վիճակագրական

տվյալների վերլուծությունը, հարցումները, փորձագիտական գնահատումները և ինստիտուցիոնալ ինքնագնահատման մեխանիզմները: Օրինակ՝ ԱՄԿ-ի կողմից մշակված սոցիալական երկխոսության ինստիտուտների գնահատման մեթոդաբանությունը նախատեսում է շահագրգիռ կողմերի մասնակցությամբ իրականացվող ինքնագնահատման գործընթաց, որը հնարավորություն է տալիս բացահայտելու համագործակցության ուժեղ և թույլ կողմերը:

Հաջորդը վերաբերում է տվյալների աղբյուրներին և հավաքման մեթոդներին: Վերլուծությունը ցույց է տալիս, որ սոցիալական գործընկերության գնահատման գործընթացում օգտագործվում են տարբեր տվյալների աղբյուրներ՝ պաշտոնական վիճակագրություն, վարչական տվյալներ, հարցումների արդյունքներ և փորձագիտական գնահատումներ: Տվյալների բազմազան աղբյուրների համադրումը հնարավորություն է տալիս ձևավորելու սոցիալական գործընկերության արդյունավետության առավել ամբողջական պատկեր:

Որպես չափանիշ է դիտարկվել նաև ուսումնասիրվող գործիքներում գնահատման հիմնական նպատակները: Միջազգային մեթոդաբանական գործիքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց հիմնական նպատակները ներառում են սոցիալական երկխոսության ինստիտուցիոնալ զարգացման գնահատումը, սոցիալական գործընկերների մասնակցության մակարդակի վերլուծությունը և սոցիալական քաղաքականության ձևավորման գործընթացում սոցիալական գործընկերության ազդեցության գնահատումը: Որոշ գործիքներ նպատակ ունեն նաև նպաստել սոցիալական երկխոսության մեխանիզմների բարելավմանը՝ առաջարկելով բարեփոխումների և զարգացման ուղղություններ:

Սոցիալական գործընկերության արդյունավետության գնահատման միջազգային գործիքները վերլուծենք նաև չափման հետևյալ ուղղություններով՝

- սոցիալական երկխոսության ինստիտուցիոնալ գնահատման գործիքներ,
- աշխատաշուկայի կառավարման և կոլեկտիվ բանակցությունների գնահատման համակարգեր,
- սոցիալական ազդեցության ու քաղաքականության արդյունավետության գնահատման մոդելներ:

Ինստիտուցիոնալ զարգացման ուղղությունը վերաբերում է սոցիալական գործընկերների ինստիտուցիոնալ զարգացման մակարդակի գնահատմանը. ուսումնասիրվում է աշխատողների և գործատուների կազմակերպությունների/միությունների ներկայացվածությունն ու նրանց մասնակցությունը քաղաքականությունների մշակմանը: Այս առումով առավել մշակվածը ԱՄԿ-ի կողմից կիրառվող մեթոդն է, որը նախատեսված է սոցիալական երկխոսության ինստիտուտների ներառականության և արդյունավետության ինքնագնահատման, ինչպես նաև բարեփոխումների պլանավորման համար:

Կոլեկտիվ բանակցությունների ուղղությունը կենտրոնանում է կոլեկտիվ բանակցությունների համակարգի գնահատման վրա. չափվում են պայմանագրերի ծածկույթը, բանակցային գործընթացների արդյունավետությունը և գործընկերների համագործակցության ձևերը: ՏՀԶԿ-ի Կոլեկտիվ բանակցությունների և սոցիալական երկխոսության ցուցանիշները հնարավոր են դարձնում տարբեր երկրների միջև համեմատական

վերլուծություն իրականացնել ՝ կապելով ցուցանիշները աշխատաշուկայի ընդհանուր արդյունքների հետ, ինչը հանդիսանում է տվյալ մեթոդի ուժեղ կողմ է: Ինչ վերաբերում է Եվրոպական հանձնաժողովի արդյունաբերական հարաբերությունների զեկույցին, ապա այն ապահովում է ամենալայն միջազգային քանակական տվյալների բազան՝ ներառելով արհեստակցական կազմակերպությունների խտությանն ու գործադուլային ակտիվությանը վերաբերող տեղեկատվություն:

Սոցիալ-տնտեսական ազդեցության ուղղությունը գնահատում է սոցիալական երկխոսության ազդեցությունն աշխատաշուկայի կայունության ու սոցիալական պաշտպանության համակարգի վրա: Այս կատեգորիայում աչքի են ընկնում Սոցիալական ազդեցության գնահատման մոդելները (կիրառվում են հիմնականում հետազոտական կենտրոնների կողմից), ինչպես նաև Եվրոպական հանձնաժողովի զեկույցը, որն ինտեգրում է ԵՄ անդամ պետությունների կուտակված քաղաքականությունն ու փորձը հատկապես ազգային սոցիալ-տնտեսական խորհուրդների ազդեցության և կառավարման ժողովրդավարացման ուղղությամբ:

Համեմատական վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ սոցիալական գործընկերության գնահատման միջազգային գործիքները հիմնականում կենտրոնանում են սոցիալական երկխոսության ինստիտուցիոնալ և գործընթացային բաղադրիչների վրա, մինչդեռ սոցիալական գործընկերության սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատումը հաճախ ներկայացված է սահմանափակ ձևով: Բացի այդ՝ վերլուծությունը ցույց է տալիս, որ նման գնահատման մեթոդաբանությունների կիրառումը պահանջում է տվյալների համակարգված հավաքագրում և սոցիալական գործընկերների ակտիվ մասնակցություն:

Ուսումնասիրված բոլոր գործիքների ընդհանրությունն այն է, որ յուրաքանչյուրը ներառում է ինստիտուցիոնալ ծածկույթը, ինչպես նաև առնվազն մեկ գործընթացային կամ ազդեցության ցուցիչ: Սակայն նրանց միջև առկա են նաև մի շարք տարբերություններ, ինչպես՝

- Բոլոր գործիքները հիմնվում են ինչպես քանակական, այնպես էլ որակական ցուցանիշների համադրության վրա, սակայն դրանց կշիռն ու ընտրությունը տարբեր են, ինչը դրանք դարձնում է դժվար համեմատելի,
- ԱՄԿ-ի սոցիալական երկխոսության ինստիտուտների ինքնագնահատման հարցաշարն ամենաօգտակարն է ազգային ինստիտուցիոնալ բարեփոխումների պլանավորման տեսանկյունից՝ ՏՀԶԿ-ի ցուցանիշները՝ տնտեսական ուղղությամբ վերլուծությունների, իսկ ԵՄ զեկույցը՝ ժողովրդավարության ցուցանիշների գնահատման տեսանկյուններից:
- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ չհանդիսացող, հատկապես անցումային ու զարգացող երկրների (ներառյալ ՀՀ) համար ՏՀԶԿ-ի և ԵՀ մեթոդաբանություններն ունեն սահմանափակ կիրառություն՝ ինստիտուցիոնալ տարբերությունների պատճառով:

Աղյուսակ 1-ում պատկերված է ուսումնասիրված գործիքների համեմատական վերլուծությունը.

Աղյուսակ 1.

Սոցիալական գործընկերության արդյունավետության գնահատման միջազգային գործիքների համեմատական վերլուծություն

Մեթոդաբանական գործիք	Գնահատման ինստիտուցիոնալ մակարդակ	Կիրառվող ցուցանիշների համակարգ	Օգտագործվող հետազոտական մեթոդներ	Տվյալների աղբյուրներ և հավաքման մեթոդներ	Գնահատման հիմնական նպատակներ
ԱՄՆ սոցիալական երկխոսության արդյունավետության հնարավորությունների ինքնագնահատման հարցաշար	Ազգային մակարդակ, որոշ դեպքերում ոլորտային	Ինստիտուցիոնալ և գործընթացային ցուցանիշներ, ներառյալ անդրադարձություն, բանակցությունների ծածկույթ, եռակողմ խորհրդատվական մարմինների գործունեություն	Ինստիտուցիոնալ ինքնագնահատում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ	Հարցաշարեր, փորձագիտական գնահատումներ, պաշտոնական տվյալներ	Ինստիտուցիոնալ զարգացման գնահատում, բարեփոխումների կիրառվելիություն, հասարակությունում ուժեղ և թույլ կողմերի բացահայտում
ՏՀՀԿ սոցիալական գործընկերության ցուցանիշներ	Ազգային և ոլորտային մակարդակ, հիմնականում բարձր եկամուտ ունեցող երկրներ	Քանակական սոցիալ-տնտեսական ցուցանիշներ՝ կոլեկտիվ պայմանագրերի ծածկույթ, անդամակցություն դիմումիկա, գործադուլային պայքարություն, աշխատավարձերի դինամիկա	Վիճակագրական վերլուծություն, տվյալների համակցված մոդելավորում	Ազգային վիճակագրություն, վարչական տվյալներ	Սոցիալական գործընկերության տնտեսական ազդեցության գնահատում, գծի/միդլիերի վերլուծություն
Եվրոպական հանձնաժողովի արդյունաբերական հարաբերությունների զեկույց	Ազգային, ոլորտային և ձեռնարկությունների մակարդակ	Ինստիտուցիոնալ, գործընթացային և ազդեցության ցուցանիշներ՝ ներառյալ սոցիալական խորհուրդների ազդեցություն, աշխատողների ներգրավվածություն, կառավարման ժողովրդավարացում	Վիճակագրական վերլուծություն, քաղաքականության գնահատման մեթոդներ, հարցումներ	Ազգային և եվրոպական տվյալների բազա, փորձագիտական գնահատումներ	ԵՄ անդամ պետությունների քաղաքականություն և փորձի համադրություն, սոցիալական երկխոսության գործընթացի գնահատում, ժողովրդավարության ցուցանիշների չափում

Ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ առկա մեթոդաբանությունները, թեև արժեքավոր են, սակայն չեն ապահովում արդյունավետության ամբողջական չափման միասնական շրջանակ՝ հատկապես զարգացող երկրների ու անցումային տնտեսությունների համատեքստում, ինչն ուղղակիորեն հիմնավորում է նոր, ավելի ճկուն մեթոդաբանության մշակման անհրաժեշտությունը:

Միևնույն ժամանակ Հայաստանի համատեքստի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկայումս սոցիալական գործընկերության արդյունա-

վետության գնահատման համակարգված մեթոդաբանություն կամ ինդեքսային գնահատման գործիք չի կիրառվում: Թեև սոցիալական երկխոսության զարգացման ուղղությամբ իրականացվել են տարբեր նախաձեռնություններ, այդ թվում՝ միջազգային փորձի ներդրման փորձեր, դրանց կիրառումը դեռևս չի ստացել համակարգային բնույթ: Այդ հանգամանքը կարևորում է սոցիալական գործընկերության արդյունավետության գնահատման նոր մեթոդաբանական գործիքների մշակման անհրաժեշտությունը, որոնք կարող են ապահովել համագործակցության բազմաչափ և համակարգված գնահատում ազգային մակարդակում:

Եզրակացություն

Սոցիալական գործընկերությունը ժամանակակից հասարակություններում կարևոր դեր է կատարում աշխատանքային հարաբերությունների կարգավորման, սոցիալական կայունության պահպանման և շահերի համաձայնեցման գործընթացներում: Հետազոտության շրջանակում իրականացված տեսական և համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ սոցիալական գործընկերության արդյունավետության գնահատումը միջազգային գիտական և կիրառական դաշտում դիտարկվում է որպես բազմաչափ գործընթաց, որը ներառում է ինստիտուցիոնալ, գործընթացային և արդյունքային բաղադրիչների համադրություն:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սոցիալական գործընկերության գնահատման համար մշակվել են տարբեր մեթոդաբանական գործիքներ և ցուցանիշների համակարգեր, որոնք կիրառվում են ինչպես միջազգային կազմակերպությունների, այնպես էլ ազգային մակարդակի քաղաքականությունների վերլուծության շրջանակում: Մասնավորապես սոցիալական երկխոսության ինստիտուտների ինքնագնահատման մեթոդները, կոլեկտիվ բանակցությունների ցուցանիշների համակարգերը և սոցիալական ազդեցության գնահատման մոդելները հնարավորություն են տալիս գնահատելու համագործակցության ինստիտուցիոնալ զարգացումը, գործընկերների մասնակցության մակարդակը և սոցիալ-տնտեսական արդյունքները:

Միևնույն ժամանակ իրականացված համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա գործիքներից յուրաքանչյուրը կենտրոնանում է սոցիալական գործընկերության առանձին կողմերի վրա և ամբողջական կերպով չի ընդգրկում այս երևույթի բոլոր չափումները: Այդ հանգամանքը պայմանավորում է սոցիալական գործընկերության գնահատման բազմաչափ և համակցված մոտեցման անհրաժեշտությունը, որը պետք է համադրի ինչպես քանակական, այնպես էլ որակական ցուցանիշները: Այսպես՝ ԱՄԿ-ի մոտեցումը առավել հարմար է ազգային ինստիտուցիոնալ բարեփոխումների պլանավորման համար, ՏՀԶԿ-ի ցուցանիշները թույլ են տալիս գնահատել սոցիալական գործընկերության տնտեսական ազդեցությունը, իսկ Եվրոպական հանձնաժողովի զեկույցն ապահովում է ժողովրդավարության և արդյունաբերական հարաբերությունների գնահատման համապարփակ ցուցանիշներ:

Միևնույն ժամանակ ուսումնասիրությունը բացահայտել է մի շարք բացեր, մասնավորապես՝

- Բացակայում է ազդեցության ու «արդյունք-ելքի» շղթայի համակողմանի

չափիչ ցուցանիշը:

• Բացակայում են ոչ ֆորմալ գործընթացներին անդրադարձները:

• Ցուցանիշների ոչ ամբողջական ներդաշնակությունն ու տարընկալումները դժվարացնում են որևէ մեթոդի կիրառելիությունը բազմաթիվ երկրներում:

• Զարգացող երկրների և անցումային տնտեսությունների համատեքստի թերի արտացոլումը:

Միջազգային մեթոդաբանությունները հիմնականում կենտրոնացած են ազգային և բարձր եկամուտ ունեցող երկրների պայմանների վրա, ինչը սահմանափակում է դրանց կիրառելիությունը զարգացող և անցումային տնտեսություններում, ինչպիսին Հայաստանն է: Անհրաժեշտ է ընդգծել, որ Հայաստանի համատեքստում ներկայումս չի կիրառվում սոցիալական գործընկերության արդյունավետության համակարգված գնահատման գործիք կամ ինդեքս, ինչն ընդգծում է նոր մեթոդաբանական լուծումների անհրաժեշտությունը: Այս հանգամանքը հրատապ է դարձնում սոցիալական գործընկերության արդյունավետության ավելի ամբողջական գնահատման նոր մեթոդաբանական շրջանակի մշակումը, որն ի զորու կլինի ոչ միայն ամփոփել ձևավորված ինստիտուտների առկայությունն ու ծածկույթը, այլ նաև արտացոլել բանակցային գործընթացների որակն ու իրական ազդեցությունը սոցիալ-տնտեսական արդյունքների վրա:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ սոցիալական գործընկերության արդյունավետության գնահատման համար անհրաժեշտ է մշակել համապարփակ, ճկուն և տեղայնացված մեթոդաբանություն, որը կներառի ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ գործընթացային և ազդեցության ցուցանիշներ՝ ապահովելով համեմատական վերլուծության հնարավորություններ և համագործակցության բազմաչափ գնահատում: Սոցիալական գործընկերության արդյունավետության գնահատման նոր մեթոդաբանական մոդելների մշակումը կարող է նպաստել Հայաստանում սոցիալական գործընկերության մեխանիզմների զարգացմանը և աշխատանքային հարաբերությունների կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ խթանելով Հայաստանի սոցիալական երկխոսության համակարգի կայուն զարգացումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, Երևան, «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, 2025
2. Dunlop J., Industrial Relations Systems, Boston: Harvard University Press, 1958.
3. European Commission. Industrial Relations in Europe: Annual Review. Brussels: European Commission, 2021.
4. International Labour Organisation (ILO). Social Dialogue Indicators: Guidelines for National Evaluation. Geneva: ILO, 2020.
5. Marx, K. Capital: A Critique of Political Economy. Volume I. Hamburg: Verlag, 1867.
6. Organisation for Economic Co-operation and Development (OECD). Measuring Collective Bargaining and Industrial Relations Outcomes. Paris: OECD Publishing, 2019.
7. Parson T. The Social System. Glencoe, IL: Free Press, 1951.
8. Putnam, R. Bowling Alone: The Collapse and Revival of American Community. New York: Simon & Schuster, 2000.
9. Weber M. Economy and Society: An Outline of Interpretive Sociology. Berkeley: University of California Press, 1978.